ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 2200-Ա « 02 » հունիսի 2025թ.

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՓՈՂՈՑԻ Հ.15 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԿՐՊԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Սումարա» ՍՊ ընկերության տնօրեն Սուրիկ Սմբաթյանի դիմումը՝ Բագրատունյաց փողոցի հ.15 հասցեի հարևանությամբ գտնվող կրպակի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 04.12.2003թ. հ.1440475 վկայական) զբաղեցրած հողամասի համար 07.11.2003թ. կնքված հ.30 հողի վարձակալության պայմանագիրը լուծելու մասին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ և 469-րդ հոդվածներով.

1.Լիազորել Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, «Սումարա» ՍՊ ընկերության տնօրեն Սուրիկ Սմբաթյանի հետ կնքել Բագրատունյաց փողոցի հ.15 հասցեի հարևանությամբ գտնվող կրպակի զբաղեցրած 13.5քմ մակերեսի համար 07.11.2003թ. կնքված հ.30 հողի վարձակալության պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիր՝ կատարելով համապատասխան փոփոխություն գույքի վարձակալության բազայում:

2. Ընդունել ի գիտություն, որ վարձակալության պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրից ծագող իրավունքի դադարումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ